ՔԻՍ

Sean Smith

KIM

Շոն Սմիթ

ՔԻՍ

Մերկ ճշմարտություն

Թարգմանությունն անգլերենից՝
Լիլիթ Գրիգորյանի

ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 791.4:659
ԳՄԴ 85.37+76.0
Ս 614

Սմիթ Շոն
Ս 614 Քիմ. Մերկ ճշմարտություն / Շոն Սմիթ; Թարգմանությունն անգլերենից՝ Լ. Գրիգորյանի.- Եր.: Newmag, 2022.- 380 էջ:

Գրքում հեղինակն անդրադառնում է Քիմ Քարդաշյանի կյանքի բոլոր դրվագներին՝ անկեղծ ու մանրամասն ներկայացնելով աշխարհի ամենահայտնի հայուհու կենսագրությունը, նրա հաղթահարած դժվարություններն ու հաջողության պատմությունը: Գրքում կան քիչ հայտնի փաստեր: Հեղինակը պատմում է Քիմի մանկության, պատանեկության, սիրային կյանքի, սկանդալների, ամուսնությունների, շոու բիզնեսի բարձունքները նվաճելու մասին: Մանրակրկիտ անդրադարձ կա նաև Քիմի հայաստանյան այցին:

ՀՏԴ 791.4:659
ԳՄԴ 85.37+76.0

Նախագծի գլխավոր գործընկեր

evoca

ISBN 978-9939-884-63-9
Kim © Sean Smith, 2015
Originally published in the English language by HarperCollins Publishers Ltd.
Շոն Սմիթ «Քիմ» ©, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել HarperCollins Publishers ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Ներածություն
Մեկ օր Կալաբասասում 9

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ • **ՔԻՄԲԵՐԼԻ**

1 Մայր Հայաստան 21
2 Ընտանիքի հենասյունը 33
3 Խճճված սիրավեպ 55
4 Աշխարհի մեծագույն մարզիկը 65
5 Թույն դեմքը 81
6 Նևրլենդ 97
7 Իրական աշխարհը 113

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ • **ՔԻՄ ՔԱՐԴԱՇՅԱՆ**

8 Տիկին Թոմասը 129
9 Ռոբերտ Քարդաշյանի մահը 143
10 Զգեստապահարանների թագուհին 151
11 Վառ երևակայություն 167
12 Քիմի հետքերով 187
13 Պարող արքայադուստրը 201
14 Սիրավեպ աշխատանքի հետ 219
15 72 օր 235

16	Թերուսը	249
17	Ում եմ տեսնում	265
18	Մարմինը որպես բրենդ	281
19	Քեյթլին	299
20	Փառքի կրկնապատկում	313
	Ամփոփիչ մտքեր	335
	Քիմի աստղերը հուշում են	345
	Կյանքն ու ժամանակագրությունը	357
	Երախտագիտության խոսք	373

Նվիրվում է Ռոդնիին և Նիքիին

Ներածություն

ՄԵԿ ՕՐ ԿԱԼԱԲԱՍԱՍՈՒՄ

Հունիսի 4, 2015 թ.

Հինգշաբթի է, անտանելի շոգ օր Կալաբասասում: Սուշի բարում մի սիրալիր երիտասարդ հայտնեց, որ դրսում 38 աստիճան է: Միջօրեին նույնիսկ ստվերոտ հատվածներում է շոգ: «Այնքան շոգ է, որ ձուն դնես գետնին, կեփվի» ծեծված արտահայտությունն այստեղ միանգամայն տեղին է: Ինչ ձու, իրականում կարելի է մի ամբողջ անգլիական նախաճաշ պատրաստել: Այնպես որ, մինչև օրվա երկրորդ կեսը կամ մինչև երեկո, երբ եղանակը հովանում է, դժվար թե տեսնես Քիմ Քարդաշյան Ուեսթին հատուկ իր պատվերով արտադրված արծաթագույն Rolls-Royce Phantom-ով շրջելիս:

Կալաբասասը Լոս Անջելեսում հայտնի է Հովիտ անունով: Ավելի ստույգ՝ դա Սան Ֆերնանդոն է կամ Արևմտյան հովիտը: Տեղացիները կարծում են, որ այստեղ նվազագույնը 5 աստիճանով ավելի տաք է, քան Սանտա Մոնիկայի, Վենիսի և Մալիբուի շքեղ լողափերում: Թեև Կալաբասասը դառնում է նույնքան ցանկալի վայր՝ շնորհիվ հարուստների ու հայտնիների հոսքի, որոնք հասկանում են, որ Վենտուրա մայրուղու

(101-րդ խճուղի) երկայնքով 40-րոպեանոց հոգնեցուցիչ խցանումը մեծ գին չէ այս վայրի արժանիքների դիմաց: Այստեղ 1 միլիոն դոլար արժողության անշարժ գույքը Բևերլի Հիլզում կարող է արժենալ 10 միլիոն: Սակայն այս արժեգինը երկար չի տևի: Քարդաշյանները Կալաբասասը դարձրել են հայտնի վայր իրենց ռեալիթի շոուի և բազմաթիվ լուսանկարների շնորհիվ, որոնք նրանք արել են իրենց ամենօրյա կյանքում:

Քիմից ու իր ընտանիքից բացի, ամենահայտնի բնակիչն այստեղ, թերևս, Դրեյքն է՝ բացառիկ հաջողակ կանադացի ռեփերը, որն այս վայրն անմահացրել է իր 2 On/Thotful երգում՝ «Կալաբասասի իմ տունն օրրան է ապահով: Լոսից կես ժամ հեռու մի տեղ է կորած»:

Լեգենդի համաձայն՝ Կալաբասասն իր արտասովոր անունը ստացել է 1824 թ. տեղի ունեցած մի միջադեպի արդյունքում: Մի ագարակատեր, որն Օքսնարդից (96 կմ դեպի հյուսիս) ուղևորվում էր Լոս Անջելես, ճանապարհին շուռ է տալիս դդումներով բեռնված իր սայլը և դդումները շաղ տալիս ճանապարհով մեկ: Հաջորդ գարնանը հարյուրավոր դդումներ են աճում ճանապարհի եզրին, ինչի հետևանքով տարածքն անվանում են Լաս Կալաբասաս (իսպաներեն calabaza բառից, որը նշանակում է դդում)՝ վայր, որտեղ դդումներ են ընկել:

Իրականում Կալաբասասը քաղաք է, որ 1991 թ. դարձել է Լոս Անջելես շրջանի մի մասը: Բայց Լոս Անջելեսի հետ ոչ մի ընդհանրություն չունի: Հոլիվուդի մեծ աստղերը նախկինում չեն բնակվել Կալաբասասում: Փոխարենը՝ եկել են աշխատելու, չնայած ոմանք այստեղ հանգստանալու են եկել աղմկոտ Լոսից կտրվելու նպատակով:

1935 թ. Warner Brothers ընկերությունը կալվածք գնեց Կալաբասաս Կիրճի մոտակայքում, որը հետագայում հայտնի դարձավ Ուորներ Բրոս ագարակ անվամբ: Բազմաթիվ դասական ֆիլմեր են նկարահանվել այստեղ: Էրոլ Ֆլինի մասնակցությամբ «Ռոբին Հուդի արկածները» ֆիլմում այդ փոշոտ տեղանքը փոխարինում էր Շերվուդյան անտառին: Ֆլինը գնում էր Հովիտ՝ ֆիլմերում նկարահանվելու, նաև «Ճանապարհ դեպի Սանտա Ֆե» վեսթերնում, որտեղ խաղում էր նաև ապագա ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանը: Հոլիվուդյան մեծ աստղ Գերի Կուպերն Օսկար ստացավ իր հերոս սերժանտ Յորքի դերակատարության համար, որը խրամատներում (Կալաբասասում) պայքար էր մղում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Պատերազմական ժամանակաշրջանի ամենահայտնի սիրավեպը՝ «Կասաբլանկան», որը համարվում է բոլոր ժամանակների լավագույն ֆիլմերից մեկը, նույնպես մասամբ նկարահանվել է ագարակում:

Մեր օրերում դասական ֆիլմերն իրենց տեղը զիջել են ռեալիթի շոուներին, չնայած Հովիտը վաղուց արդեն նախընտրելի վայր է նաև պոռնոգրաֆիայի տեսախցիկների համար: «Քարդաշյանների ընտանիքը» ամենևին էլ առաջին ռեալիթի շոուն չէ, որը նկարահանվել է Կալաբասասի տներից մեկում: Թերևս ամենահայտնին «Նորապսակներ. Նիք և Ջեսիկա» շոուն էր, որը սկսվել էր 2003-ին ու հետևում էր փոփ երգիչ Նիք Լաշեի և շիկահեր գեղեցկուհի ու երգչուհի Ջեսիկա Սիմսոնի նոր սաղմնավորվող ամուսնությանը: Հիմարիկ շիկահերի ոճով Ջեսիկայի քմահաճույքները զվարճալի էին, սակայն երեք եթերաշրջան հետո, երբ նա ապահարզան տվեց, նախագիծը դադարեց: Իրական կյանքը տապալեց իրականության շոուն:

Հիմա Քարդաշյանները քաղաքում շատ չեն երևում, հատկապես իրենց DASH բուտիկը 2012 թ. Արևմտյան Հոլիվուդ տեղափոխելուց հետո: Պարզեցի, որ ի սկզբանե խանութը Գրանադայի մի փոքրիկ հրապարակում էր՝ Կալաբասասի կենտրոն համարվող The Commons ընդարձակ առևտրի կենտրոնի դիմացի փողոցում: Մի քանի տարի առաջ Քարդաշյաններն այստեղ էին գրեթե ամեն օր, քանի որ ձգտում էին զարգացնել իրենց բիզնեսը, նախքան խանութը կդառնար պարզապես դեկորացիա նկարահանման համար: Հաճելի վայր էր, սակայն ոչ մի յուրահատուկ բան չկար. նման տեղեր կարելի է գտնել Ամերիկայի հազարավոր փոքրիկ քաղաքներում:

DASH-ից մի քանի մետր ներքև՝ Shibuya կոչվող սուշի բարում ամեն երկու օրը մեկ կարելի էր տեսնել Քարդաշյաններին: Այդ ընտանիքի կանայք միշտ ձգտել են առողջ սննդով հետևել իրենց փարթամ կազմվածքներին: Խոհարարը, որը բարի հետևում պատրաստում էր տապակած և համեմված թունայով իմ համեղ լանչը, ասաց, որ Քիմը շատ է եղել իրենց ռեստորանում, բայց Քանյե Ուեսթը միայն մեկ անգամ է միացել նրան:

Shibuya-ն փոքրիկ ռեստորան է, սրահն արագ է լցվում մարդկանցով, ուստի երբ ապրիլյան մի երեկո Քիմն ու Քանյեն հայտնվել էին այստեղ, ստիպված էին սպասել հերթում և կես ժամ նստել դրսի նստարանին, մինչև սեղան ազատվեր: Քիմն այստեղ էր եկել Jimmy Kimmel Live! հաղորդումից անմիջապես հետո, և դա հարմար առիթ էր, որ տուն գալու ճանապարհին նրան լուսանկարեին: Մի լուսանկարիչ կարողացել էր որոշ պարզ կադրեր անել, որտեղ Քանյեն տանջված ու խոժոռ տեսք էր ընդունել, ինչը նա միշտ անում է տեսախցիկների առաջ: Իսկ

Քիմը՝ էլեգանտ դիմահարդարմամբ և տպավորիչ գոգավորությունը ցուցադրող դեկոլտեով, երջանիկ ժպտում էր:

Shibuya-ում Քիմի սիրած ուտեստը հաուս սուշի ռոլն է: Իրականում, նրանք այստեղ գալու կարիք չունեն, քանի որ իրենց սեփական խոհարարն ունեն: Իմ լանչը պատրաստող խոհարարն այնքան էլ չէր հետաքրքրվում Քարդաշյանների նորություններով: Նա տարված էր Մանչեստր Յունայթեդով և երազում էր այն օրվա մասին, թե երբ է Ուեյն Ռունին գալու իր մոտ սաշիմի ուտելու:

Առաջնակարգ փոքրիկ բուտիկներում, պաղպաղակի և առողջ սննդի խանութներում շատ ավելի հավանական է տեսնել Քիմի երիտասարդ խորթ քույրերին՝ Քենդալ ու Քայլի Ջեներներին, որոնք մյուս դեռահասների պես նախընտրում են ընկերների հետ ժամանակ անցկացնել մոլերում, ոչ թե նստել շքեղ թաղամասի՝ իրենց ցանկապատված «ոսկե վանդակում»:

Երբ սուրճ էի խմում Blue Table նպարեղենի խանութում, մի երիտասարդ կին, որը երազում էր երգչուհի դառնալ և իր աստեղային ժամին սպասելով՝ աշխատում էր Կալաբասասում, ասաց, որ մեկ օր առաջ տեսել է Սքոթ Դիսիքին: Նա Քիմի քրոջ՝ Քորթնիի վաղեմի բոյֆրենդն է և նրա երեխաների հայրը: Սքոթը հանրահայտ դեմք է դարձել Քարդաշյանների հեռուստաշոուում հաճախակի հանդես գալու շնորհիվ:

— Իսկ ինչո՞վ է նա իրականում զբաղվում,– հարցրեց իմ զրուցակիցը:

Պետք է խոստովանեի, որ գաղափար չունեմ և մտքում նշեցի՝ պարզել դա:

Հանրաճանաչ դեմքերի ներկայությունը հրաշքներ է գործում տեղական առևտրի համար: Մի քանի հարյուր մետր այն

կողմ մեկ այլ առևտրի կենտրոնում՝ El Camino-ում, մի «տնական սրճարան կա առողջ սնվողների համար», որի անունը Health Nut է, և որը հայտնի է դարձել որպես վայր, որտեղից Քարդաշյան աղջիկները գնում են իրենց աղցաններն ու դրանք մշտապես ըմբոշխնում հեռուստաէկրանին: Գալիս եմ այստեղ, որ գնեմ Քիմի սիրած աղցանը՝ ինչ էլ որ այն լինի:

— Խնդիր չկա,— ասաց վաճառողը՝ ընդունելով պատվերս և գանձելով գումարը:

— Իսկ ինչ կա այդ աղցանի մեջ,– հարցրեցի:

— Գաղափար չունեմ,– պատասխանեց ժպտալով,– պարզապես սեղմեցի կոճակը, որի վրա գրված է «Քարդաշյան»:

Պարզվեց՝ մի սովորական հավի աղցան է՝ հաճելի սոուսով. չկար մի առանձնահատուկ բան, որ տան խոհարարը չկարողանար պատրաստել հինգ րոպեում:

Որոշ ժամանակ Քարդաշյանները՝ որպես ամենահայտնի դեմքեր, խոշոր մրցակից ունեին՝ ի դեմս Ջասթին Բիբերի, որը ցանկապատված Կալաբասասի The Oaks կոչվող թաղամասում 6.5 միլիոն արժողությամբ տուն էր գնել 2012-ին: Այժմ այն նորից Քարդաշյանների տիրույթն է: Երկու տարի անց Ջասթինը ձանձրացավ արվարձանային կյանքից և իր առանձնատունը՝ 5 ննջասենյակով, լողավազանով, ջակուզիով, կինոթատրոնով և սքեյթբորդի թեքահարթակով, 1 միլիոն դոլար շահույթով վաճառեց Քիմի քրոջը՝ Քլոյեին: Հիմա նա կարող է առանց որևէ խնդրի շրջել այդ տարածքում և այցելել իրենց ավագ քրոջը՝ Քորթնիին, որը նույնպես այնտեղ է ապրում:

Քլոյեի առանձնատունը համեմատաբար հասարակ է՝ ի տարբերություն Դրեյքի արտառոց պալատական շքեղության: Նա ԱՄՆ ամենամեծ աստղերից է, չնայած նրա համբավը

դեռ պետք է կտրի-անցնի Ատլանտյան օվկիանոսը, իսկ ամենահայտնի բրիտանական հիթը Ռիհաննայի հետ համատեղ երգն է՝ What's My Name?:

Նա ապրում է Հիդեն Հիլզում՝ մի աննկարագրելի շքեղ տանը, որը 2009 թ. վաճառքի էր դրված 27 միլիոն դոլարով, սակայն կարողացավ գնել բավական ցածր գնով՝ 8 միլիոն դոլարով, երբ անշարժ գույքի գինն ընկել էր շուկայում: Այստեղ կա կինոդահլիճ, գինու մառան, ախոռներ, վոլեյբոլի դաշտ, օլիմպիական չափերի լողավազան, բար լոգարանում և կյանքի այլ հաճույքներ: Դրեյքը մի անգամ Migos հիփ-հոփ խմբի Versace երգից մի հատված էր երգել. «Սա փակ կալվածք է, ուրեմն բարի եղիր՝ ռադդ քաշիր մասնավոր տարածքից»: Ու թեև նա ռեփ է կարդում փողոցի լեզվով, չեմ կարծում, թե կհամաձայներ ապրել նման փողոցում:

Հիդեն Հիլզը փոքր առանձնատներով փակ ավան է, որը գրավել էր Քրիս և Բրյուս Ջենների ուշադրությունը, երբ նրանք պլանավորում էին դուրս գալ Բևերլի Հիլզից. Քիմն ու իր քույրերն այդ ժամանակ դպրոցում էին սովորում: Քրիսն այս տարածքին ծանոթ էր իր ընկերուհիներից մեկի շնորհիվ, Քիմի հորից՝ Ռոբերտ Քարդաշյանից բաժանվելուց հետո:

Ասում են՝ Հիդեն Հիլզում ավելի շատ փող կա, քան Բել Էյրում: Քիմն ու Քանյեն այստեղ կալվածք են գնել, որի արժեքը գնահատվել է 20 միլիոն դոլար: Լսել եմ, որ նրանք պատրաստվում են այն վերածել ապարանքի, որից հետո Դրեյքի տունն ընդամենը տաղավար կթվա:

Ամենահեգնականն այն է, որ փակ թաղամասերը ոչ միայն հեռավորություն են պահպանում հասարակ ժողովրդից, այլև սահմանափակում իրենց զտված բնակիչների